

զմեռեալս» (Բ Օր. ԻԶ). եւ որ դեռ մնացած էր Տաթեւացւոյն ժամանակ, որ կը հարցնէ<sup>1</sup>. «Զինչ է՝ որ յըմպելն զգինին՝ րափեւ յանուն մեռելոյ ի գերեզմանին<sup>2</sup>»: Եւ կը պատասխանէ՝ թէ հեթանոսներէ առնուած է, որոնք մեռելոյն ինչքը գերեզման կը դնէին անոր հետ, եւ «ի գինի ըմպելն<sup>3</sup>» մեռելոց բաժինն անոնց վրայ կը լեցնէին. եւ թէ նոյնպէս կ'ընէին «ի տունս եւ ի դուրս՝ յորժամ յիշէին» (Հրց. 656): Հոս դիտելի է նախ՝ որ «հեթանոսաց» ընծայուած սովորոյթը կապ ունէր ժամանակի հայ բարուց հետ, եւ զասոնք իսկ կը դնեն մեր առջեւ այդ վարդապետները: Ըստ այսմ ուրեմն գինին կը թափէին մեռելոց յիշատակին՝ ոչ միայն մատաղի ժամանակ, որուն կ'ակնարկեն «ի դուրս» բացատրութեամբ, այս ինքն բացօթեայ վայրերու մէջ՝ ինչպէս էին ուխտատեղիք (հմմտ. աստ, 350, '56), այլ նաեւ «ի տունս» եւ «ի գերեզմանին» տրուած ճաշերու առթիւ: Երկրորդ՝ թէ սովորութիւնս յիրաւի հեթանոսական ծա-

1. Հարցումը ըստ սպ. եւ վ կնիտկոյ 1424ի օրինակին է, եւ չկայ 1401ի օր. մէջ:

2. «ի գերեզմանին» ըստ 1424ի օր. է, եւ չկայ ի սպազրին:

3. «ի գինի ըմպելն» 1424ի օրինակէն է: